ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ, ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՋՐԻ ՏԱԿ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔԻ
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության եւ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կառավարությունները (այսուհետ՝ նախաձեռնող կողմեր),

իրենց գլխավոր նպատակը հռչակելով միջազգային հսկողության ներքո եւ Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքներին համապատասխան համընդհանուր եւ ամբողջական զինաթափման մասին համաձայնագրի շուտափույթ ստորագրումը, ինչը վերջ կդնի սպառազինության մրցավազքին եւ կվերացնի բոլոր տեսակի զենքի արտադրության եւ փորձարկման խթանները՝ ներառյալ միջուկային զենքի արտադրությունն ու փորձարկումը,

ջանալով մեկընդմիշտ վերջ տալ միջուկային զենքի բոլոր փորձարկումային պայթյուններին եւ ռադիոակտիվ նյութերով շրջակա միջավայրի աղտոտմանը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

1. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է արգելել, կանխել եւ դադարեցնել միջուկային զենքի փորձարկումային պայթյունները, ինչպես նաեւ ցանկացած այլ նպատակներով իրականացվող պայթյունները, իր իրավասության կամ հսկողության ներքո գտնվող հետեւյալ գոտիներում.

ա) մթնոլորտում եւ դրա սահմաններից դուրս՝ ներառյալ տիեզերական տարածությունը, ստորջրյա տարածություններում՝ ներառյալ տարածքային ջրերը եւ բաց ծովը, կամ

բ) ցանկացած այլ միջավայրում, եթե իրականացվող պայթյունների հետեւանքով ռադիոակտիվ նյութերի մնացորդները տարածվում են այն պետության տարածքից դուրս, որի իրավասության եւ հսկողության ներքո իրականացվում են այդ պայթյունները: Այս առնչությամբ հասկանալի է, որ սույն ենթակետի դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում միջուկային զենքի բոլոր տեսակի փորձարկումային պայթյունների (ներառյալ ստորգետնյա պայթյունները) անժամկետ արգելման մասին համաձայնագրի ստորագրման հնարավորությունը, ինչին էլ եւ ձգտում են Կողմերը՝ համաձայն սույն Պայմանագրի ներածության:

2. Բացի այդ, սույն Պայմանագրի յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է

ձեռնպահ մնալ սույն հոդվածի 1-ին կետում սահմանված միջավայրերից որեւէ մեկում, կամ նույն կետում նշված հետեւանքները առաջացնող միջուկային զենքի փորձարկումային կամ ցանկացած այլ տեսակի պայթյունների իրականացումից, իրականացմանը սատարելուց կամ մասնակցելուց:

ՀՈԴՎԱԾ 2

1. Ցանկացած Կողմ կարող է առաջարկել փոփոխություններ կատարել սույն Կոնվենցիայում: Առաջարկվող փոփոխության տեքստը ներկայացվում է ավանդապահ պետությունների Կառավարություններին, որոնք այն ներկայացնում են Պայմանագրի մյուս Կողմերին: Ապա, Կողմերի մեկ երրորդի եւ ավելիի առաջարկությամբ, ավանդապահ Կառավարությունները գումարում են համաժողով բոլոր Կողմերի մասնակցությամբ՝ առաջարկվող փոփոխությունը քննարկելու նպատակով:

2. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Կողմերի ձայների մեծամասնությամբ՝ ներառյալ նախաձեռնող պետությունները: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում բոլոր Կողմերի համար Կողմերի մեծամասնության կողմից վավերացման փաստաթղթերի ներկայացման պահից՝ ներառյալ նախաձեռնող պետությունների կողմից վավերացման փաստաթղթերի ներկայացումը:

ՀՈԴՎԱԾ 3

1. Սույն Պայմանագիրը բաց է ստորագրման համար ցանկացած պետության կողմից: Համաձայն սույն հոդվածի 3-րդ կետի, մինչ Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահը այն չստորագրած պետությունները կարող են միանալ ցանկացած ժամանակ:

2. Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման ստորագրող պետությունների կողմից: Վավերացման եւ միանալու մասին փաստաթղթերը ներկայացվում են Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության եւ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կառավարություններին, որոնք այսուհետ կհամարվեն ավանդապահ պետություններ:

3. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում բոլոր նախաձեռնող պետությունների կողմից վավերացման եւ վավերացման փաստաթղթերը ի պահ տալու պահից:

4. Այն պետությունների համար, որոնց վավերացման եւ միանալու մասին փաստաթղթերը ի պահ են տրվում սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, այն ուժի մեջ է մտնում վավերացման եւ միանալու մասին փաստաթղթերի ի պահ հանձնման պահից:

5. Ավանդապահ Կառավարությունները անմիջապես տեղեկացնում են բոլոր ստորագրող եւ միացող պետություններին ստորագրման, վավերացման կամ միացման

փաստաթղթի ներկայացման եւ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,
ինչպես նաեւ այլ ծանուցումների ստացման մասին:

6. Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն, սույն Պայմանագիրը ենթակա է գրանցման ավանդապահ Կառավարությունների կողմից:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Պայմանագիրը կնքվում է անսահմանափակ ժամկետով:

Ցանկացած Կողմ՝ իրագործելով իր ազգային ինքնորոշման իրավունքը, կարող է դուրս գալ Պայմանագրից, եթե այն որոշում է, որ Պայմանագրի կարգավորման առարկայի հետ առնչություն ունեցող ստեղծված արտակարգ իրավիճակը վտանգի տակ է դնում պետության գերագույն շահերը: Պայմանագրից դուրս գալու իր մտադրության մասին պետությունը պետք է երեք ամիս առաջ ծանուցի մյուս բոլոր Կողմերին:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Պայմանագրի անգլերեն եւ ռուսերեն կազմված օրինակները, որոնք երկուսն էլ հավասարազոր են, կպահպանվեն ավանդապահ Կառավարությունների արխիվներում: Ըստ սահմանված կարգի հաստատված օրինակները ավանդապահ Կառավարությունների կողմից կփոխանցվեն այլ Կողմերի:

Ի հավաստումն որի, ներքոստորագրյալները, պատշաճ ձեւով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Պայմանագիրը:

Կատարված է Մոսկվա քաղաքում երեք օրինակից, 1963 թվականի օգոստոսի 5-ին:

* Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի հունիսի 7-ից: